ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ

Մարտունի համայնքի սիրելի՛ երիտասարդներ,
ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա առթիվ, ցանկանում, որ ձեր կյանքը լցված լինի առողջությամբ, անսպառ եռանդով, նպատակասլացությամբ և հաջողություններով:

Թող ձեր յուրաքանչյուր գաղափար վերածվի գործի, յուրաքանչյուր նախաձեռնություն դառնա հաջողված ու օգտակար ձեռնարկ: Երիտասարդությունն այն ուժն է, որ մշտապես շարժում է հասարակությունը առաջ՝ բերում նոր մտածողություն, ստեղծագործականություն և առաջընթաց: Ձեր նախաձեռնող ոգին, վճռականությունը և համարձակությունը արժեքավոր պաշար են մեր համայնքի զարգացման և մեր երկրի ապագայի համար:

Իմ խորին համոզմամբ, Մարտունի համայնքն ունի տաղանդավոր ու նպատակասլաց երիտասարդներ, ովքեր յուրովի կբարձրացնեն կյանքի որակը մեր համայնքում իրենց շնորհներով, գաղափարներով ու հանրօգուտ ձեռնարկներով:

Հավատացած եմ, որ ձեր ջանքերով մեր համայնքը կդառնա ավելի զարգացած, գեղեցիկ և բարեկեցիկ: Ձեզ մաղթում եմ բազում հաջողություններ, առողջություն ու լուսավոր օրեր:

Լավագույն ցանկություններով՝
Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան